



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օպտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՈՒՀ ԳՐԱԿԱՏ-ՏՈՒՐԻՉՄԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՕՊՏԵ)

ԽԱՅԱՎՈՐ-ԳԼՈՒԽ ՀՅԴ, ԿԵՐԱՊԵՏԱԿԱՆ

ԱՐԱԳԱԾ ԼԵՐԸ




ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ 1984

02 NOV 2010

796
4-29
ՀԱՅՀ ՊՐՈԼԵՏ-ՏՈՒՐԻԶՄԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՕՊՏԵ)

Խնձեներ-գեղորգ ՀՈՎ. Կ.Մ.Ր.ՊԵՏԵՍԱՆ

ԱՐԱԳԱԾ ԼԵՐԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ 1934

18 MAY 2013

8934

ՆԱԽԱԲԱՆ

Արագած լեռն առաջներում դեպի իր խոտավետ լանջերն եր գրավում միայն խաղնարածների ուշադրությունը: Արագածը լինելով Անդրկովկասի մեջ ամենաբարձր լեռը, իր հմայիչ և հետաքրքիր տեսարաններով, բացի մի քանի գիտական հետազոտողներից, շատ քիչ եկակուրսանաներ ե հրապուրել դեպի իր բարձրաբերձ գագաթը՝ չնայելով նրա մատչելիությանը: Միայն խորհրդային իշխանության որոք ե, վոր պրոլետ-տուրիստների կանոնավոր կազմակերպված եկակուրսիաները հետաքրքրություն են շարժել դեպի Արագածի բարձրունքները, նրանց բացառիկ և հրապուրիչ տեսարանները:

Նոր կյանքով տոգորված պրոլետար տուրիստների համար հսկայական հրաբխային Արագած լեռը, իր գեղուզգիական յերևույթներով, բացառիկ հետաքրքրություն ե ներկայացնում: Արագածի գագաթից սկսած մինչև նրա լայնատարած սոսորուները տուրիստի առաջ, բացի զմայլեցուցիչ տեսարաններից, բաց են անում բնական հարստությունների նոր աղբյուրների հայտնագործելու միջավայր: Տուրիստները, բացի իրենց հա-



3969-87

Տեղական խմբագիր Հ. Տեր-Դավթյան. Հանձնված ե արտադրության 25/VI 1934 թ. Ստորագրված ե տպելու 4/VII 1934 թ. Ստատիստիկա Բ6 125x176. Մավական 15/8 մամուռ. Գյավիտ 8581 (Բ). Հարտարակ. 2014 Պատվեր. № 3380. Տիրաժ 3000.

Տիպոգրաֆիա ԱԿԿՊԴ Ռոստով-Դոն.



տուկ հետաքրքրությունից — ծանոթանալ այն յերեսոյթների հետ, վոր իրենք ականատես են լինելու առողջմի ժամանակ, — բնական ե, վոր կուզենան գաղափար ունենալ իրենց տեսած յերեվոյթների մասին։ Յեվ, վորովհետև պրոլետուրիստների մեծ մասն անծանոթ ե առհասարակ գեղողգիական յերեսոյթներին, մասնավորապես Արագած լեռան գեղողգիային, ուստի անհրաժեշտ եմ համարում համառոտ կերպով ծանոթացնել նրանց, վորքան հնարավոր ե մատչելի ձեռվ, Արագածի գեղողգիայի, բնական հարստությունների և տուրիստներին հետքրքրող մի քանի այլ հարցերի հետ, հույս ունենալով, վոր պրոլետար-տուրիստներն իրենց եկակուրսիաների ժամանակ, քայլ առ քայլ քննելով Արագած լեռան գեղատեսիլ լանջերը, լայնատարած վեշերը և զմայլեցուցիչ հեռանկար տեսարանները, յերկրի բնական հարստությունների նոր աղբյուրներ պետք ե հայտնագործեն։

ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԱԳԱՇԸ ԳԵՈԼՌԳԻԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

«Ալագյազ» կամ «Ալագյոզ»* կոչված լեռը, վոր հայ գրականության և պատմության մեջ հայտնի յե Արագած անվան տակ, իր ամբողջ լայնատարած փեշերով բոնում ե Հայաստանի հյուսիս-արևմտյան բաժնի մեծ մասը։ Արագածն իր ստորոտներով և շրջակայքով հայտնի յե մեր պատմության մեջ հոչչակավոր «Արագածոն», շրջանով, վոր իր մեջ պարփակում եր չորս պատմական նշանավոր գավառներ։ Արևելյան կողմից նա շրջապատված ե հին Շիրակ գավառի լայնա-

* «Ալագյազ» կամ «Ալագյոզ» թուրքական կոչումները Արագած անվան աղավաղված ձերեն են՝ թուրք լեզվի մեջ ծ, ց և ձ տառերի բացակայության պատճառով, այդ տառերը պարունակող բառերն արտասանվում են ու կամ զ տառերով. որինակ՝ հայկական «Տանձու», «Տիվաձոր», «Ծակզուխ» և «Մեծ ձոր» և «Արծնի» և այլն նման բառերն արտասանվում են քրվում են քարտեզների մեջ Տանզուտ, Տիվազոր, Զակ-զլուխ, Մեղ-զոր, Արծնի և այլն։ (Տես ուռական զլիավոր շտապի 5 վերստանոց մասշտաբի քարտեզը)։ Արագած անունն սկզբից արտասանված է Արագած ապա փոխված Ալագյազ կամ Ալագյոզ անվան թուսական ցարական գործակալները շնորհիվ ցարական քաղաքականության, աշխատել են գրականության և քարտեզների մեջ պահպանել այդ աղավաղված անունները։ Որինակ՝ հայ Գետաշեն, Քարհան գյուղերը քարտեզի մեջ փոխած են՝ Չայքենտ, «Խաշքաման» անունների Այդ քաղաքականությանը հետեւ են մոտավորապես 50-ական թ. թ. հետո Որինակ՝ նախկին քարտեզների մեջ տպած Զանկեզուրի Կաւառ բառը հետազում փոխված է Կաֆանի և այլն։

տարած դաշտավայրով, հյուսիսից՝ Նիգ դավառի
(Արարանի) լեռնակաշտով, արևելքից՝ Կոտայքի
դավառամասով, իսկ հարավից՝ Արարածյան դաշտի
«Մասիհացոտն» և «Ճակատ» կոչված մասերով:

Արագածի գագաթը բաղկացած է չորս սուր
քարածերպերից, տեղակորված աղեղնաձև, մոտ
270 աստիճ. ունեցող մի շրջանագծի վրա, նրան-
ցից ամենաբարձր կատարը, վոր կազմված է սուր
և ցից քարածեռ մասերից, գետեղված ե գագաթի
հյուսիսային կողմում, հյուսիսային լայնության
40° 39' 29" զուգահեռականի և արևելյան յերկա-
րության 61° 51' 49" միջորեյականի հանդիպման
կետում: Արագածի գագաթի այդ կատարի բարձ-
րությունը հավասար է 4096 մետրի: Բարձրու-
թյան կողմից յերկրորդ տեղը բռնում է արևմտ-
յան գաթաթամասը, ուղղված դեպի Լենինա-
կան, և ունի 4081 մետր բարձրություն. նրա-
նից հետո գալիս են հարավ-արևմտյան գագաթը
3916 մետր և ապա արևելյան կատարամասը
3879 մետր բարձրություններով:

Բացի այդ չորս գլխավոր կատարներից, նույն շըր-
ջանագծի վրա զետեղված ե մի հինգերորդ, ավելի
ցածր գագաթ, վոր գտնվում է ամենաբարձր կա-
տարի արևմտյան մասում: Այս բոլոր բարձրությ-
ուները իրար հետ միացած կորածե փոսերով կազ-
մում են Արագածի վիթխարի խառնարանը (կը-
տերը), վորն ունի մոտ 2 կիլոմ. յերկարություն
և 1,6 կիլոմ. լայնություն, իր յերկարությամբ
ձգված հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արե-
վելք: Այդ խառնարանի խորությունը, ամենափոք

տեղից հաշված, մոտ 460 մետր է: Խառնարանը
միայն հարավ-արևելյան կողմից ունի մի խոր
և լայն բացվածք, վորի միջոցով անցնում է խառ-
նարանի մեջ հավաքվող ձյուներից և սառցակույ-
տերից սկիզբ առնող Դալի (գիծ) գետակը, վորն,
ինչպես իր անունն ե ցույց տալիս, կատաղի, քա-
րավեժ սահանքով դեպի Արագածի արևելքի ստո-
րոտներն ե հոսում:

Արագածն իր գլխավոր գագաթների շրջանում
լանջերի վրա և ստորոտներում ունի նաև մի
շարք՝ այսպես կոչված՝ հրաբխային «պարագիտա-
յին» կենտրոններ, վորոնց հետ միասին նա հրաբ-
խային մի ամբողջ սիստեմ է կազմում: Այդ
կենտրոններից, գագաթների շրջանում իրանց բար-
ձրությամբ աչքի յեն ընկնում Զինգիլ (3339 մ.),
Ղղլ-Լյազեան (3417 մետր), Ամբերդի սարը
(3235 մետր), Զիարաթ (3075 մետր), Կարա-կոյ-
նակ (3022 մետր), Ղղլ-Զիարաթ (2869 մետր),
իսկ լանջերի վրա և ստորոտների շրջանում Աղե-
յամանի սարը (2308 մետր), վորքը Բողություն
(2230 մետր), մեծ Բողություն (2060 մետր), Շիշ-
թափա (1804 մետր), Բերկլու (2082 մետր), Ղղլ-
ներ և մի շարք յերկրորդական կենտրոններ: Արա-
գածի լավաների ժայթքումների ամենամեծ մասը
տեղի յե ունեցել գլխավորապես գլխավոր խառնա-
րանից, իսկ մնացած մասերն այդ յերկրորդական
կենտրոններից: Արագածի հրաբխային բոլոր տե-
սակ վիժվածքների քանակը իրավես վոր հսկայա-
կան է: Լավաների բռնած տարածության մակար-
դակը հավասար է մոտ 3000 քառ. կիլ. իսկ նրանց

շրջապատն ունի մոտ 200 կիլ. յերկարություն։ Այդ հսկայական քանակությամբ վիժված լավաները ծածկել են արագածը շրջապատող յերկրի կեղևի բոլոր հին կազմվածքները։ Այդ ամբողջ հրաբխային արտավիժված մասսայի քանակը, յեթե հաշվենք լենինականի դաշտավայրի մակերևույթից վեր, կհասնի մոտ 7560 000 000 խոր. մետրի։

Այս վիթխարի հսկայական հրաբխային մասսին իր գեղատեսիլ պատկերով, վերին աստիճանի հարուստ բնությամբ, առողջարար ողով և քաղցրահամ ջրերով միշտ զբավում ե ամենքին։ Հեղինակավոր գեղով ակադեմիկ Աբիլսը Արագածի մասին գրելիս ավելացնում ե, վոր «Արագածը զանագանգում ե Հայաստանի և փոքր Ասիայի իր նման լեռներից, և վոր նրա առանձնահատկությունների շնորհիվ ե, վոր նա ստացել ե առանձին ազգագրական նշանակություն, լինելով իբրև կենտրոնավայր և որրան հայ ժողովրդի։ Նրա բնության բանաստեղծական տեսարանները, վորոնցով գեռ 1500 տարի առաջ Մովսես Խորենացին արդարացրել ե Հայաստանի հիմնավորումը Արագածի վրա, մնացել են մինչև որս անփոփոխ։ Կովկասի հայտնի կարտոգրաֆ Ա. Պաստուխովը, 1893 թ. հուլիս ամսի 25-ին Արագածի գագաթը բարձրանալուց հետո գրում ե, «Առավոտյան ժամը 8-ից 15 ըովե անց մենք հասանք ամենաբարձր գագաթին, վորի բարձրությունը հավասար է 13 167 վոտնաչափի (4096 մետրի)։ Այստեղից մեր աջքի առաջ պատկերացավ մի վեհագույն տեսարան։ Մեր վոտքերի տակ բացված եր աշ-

խարհի ամենաբարձր խառնարաններից մեկի անդունդը, վորի մեջ, փոխանակ հրային լավայի, հանդշում են մշտնջենական ձյան կույտերի։ Դեպի արևմուտք և հարավ Արագածի լանջերի վրա զըմբուտագույն կանաչների մեջ փայլում եյին լեռնային լճերը, վորոնց շուրջը փռված եյին գեղատեսիլ քրդական վրանների խմբակները։ Ավելի հեռուներում յերեսում եյին առանձին բլուրների բարձրունքները, իսկ նրանց յետևում, ինչպես ծով, փռված եր Արաբատյան մշուշապատ հովիտը, վորի ծայրամասում բարձրացած եր Բիբլիական հական, վորի գագաթը մինչև կապույտ յերկինքն եր համբարձած»։

Ա. Պաստուխովը Արագածի հետախուզողոններից միակն ե, վոր նկարագրում ե Արագածի արևմտյան գագաթի վրա հանդիպած «Փուլգուրիտների» մասին։

Արագածն ամսն կողմից գեպի իր առողջարար բարձր լանջերն ե զրավում հայ, քյուրի, թուրք խաշնարածներին, վորոնք իրանց հազարավոր հոտերով ու նախիրներով հյուրնկալվում են նրա փարթամ արոտատեղիներում։ Այդ արոտատեղիների ընդհանուր տարածությունը, չհաշվելով 2515 հեկտար բռնող քարքարոտ տեղերը, մոտ 57200 հեկտար ե։

Գյուղացությունից, վորակյալ գիտնականներից բացի շատերն են հաճախել Արագածի բարձրունքները և զմայլվել նրա գեղատեսիլ բնության պատկերներով, գովել Արագածի այդ հատկությունները։ Հայտնի գիտնական Մ. Վագները, 1843 թ.

հուլիս ամսին, ուսումնասիրության նպատակով Արագած բարձրանալիս, Արագածի լանջերի գեղեցկությունից սքանչացած զրում ե, վոր «Արագածի մեծ դարատափից Ավարանի լայն հովտի բացվող տեսարանը վերին աստիճանի նկարագեղ ե»: Արագածի գեղեցիկ տեսարաններն այնքան եյին հմայել նրան, վոր, Արագածից ցած իջնելիս, նա ավելացնում ե, թե՝ «այդպիսի մի սիրուն, ահեղ և վայրենի պատկերից բաժանվելն ինձ համար դժվար յեղավ. յես իմ ուղեկիցներիս ոթեան ուղարկելուց հետո յերկար ժամանակ այդ նկարչական գերքը քննեցի, վորն արժանի յեր մի հմուտ վարպետի վրձինի, իմ հայրենակիցներին ներկայացնելու համար, վորոնք չեն կարող անձամբ հայաստան գալ ճանապարհորդելու»*:

Մի ուրիշ տեղ նա գրում ե, վոր «Ալպյան յերկրների մեջ հայաստանում Արագածի մեծ դարատափը շատ գեղեցիկ ե: Կովկասի մեջ չկա մի ուրիշ տեղ, վոր ծաղիկների պեսպեսությունով և շատությունով, աղբյուրների առատությունով և ամառային ողի քաղցրությունով հավասար լինի Արագածին»... «Ինձ դժվար յեղավ այս առողջ, զով և ամառվա զվարթ ու ծաղկած լեռնագավառը թողնել և նորից իջնել Վրաստանի հովտների մեջ տապակեն ող շնչելու»: Ուժին կայծակների շանթերը հարվածելով բարձրագույն լեռների գագաթի ժայռերը կամ անապատների ավազակույտերը, հաճախ հալեցնում են նրանց: Կայ-

ծակները հալեցնելով ավազները, առաջ են բերում մի աեսակ ծովոված խողավակածե մարմիններ: Իսկ ժայռերին հարվածելիս նրանք հալում են խփած տեղը և ծուռ ու մուռ խողովակածե անցնում են ժայռի միջից, յերբեմն ել, հալած մասը դուրս բերելով ժայռերից, զանազան ձև են տալիս նրանց: Այս յերևույթները, վոր հայտնի յեն «Յուլգութիւներ» կոչումով, մեծ քանակությամբ տեղի յեն ունեցել Արագածի արևմտյան գագաթի վրա: Բազմաթիվ ֆուլգուրիտներ, զանազան ուղղություններով ծակծկելով հոկայական վիմաժայռերը, ստեղծել են ծառի նման ձևեր: Ժայռերի մի մասը ծակծկելուց բացի, կայծակների հարվածներից ճեղքմեղքել և կոտրավել են: Այս բոլոր ժայռերը, վոր ծակծկված են ֆուլգուրիտներից, մագնիսացել են և մագնիսի սլաքի թեքումը, Պաստուխովի նկատումով, հասնում եր յերբեմն մինչև 180⁰: Այդ գագաթի վրա մի ժայռի տակ նա նկատել ե ֆուլգուրիտներից առաջ յեկած զանազան մեծության հալած ապականման գնդիկներ: Ժայռերի վրա գոյացած ֆուլգուրիտների ծակերի արամագիծը, Պաստուխովի ասելով, հավասար ե մոտ 0,4 ֆուտի:

Արագածն իր բոլոր յերկրորդական հրաբխային կենտրոնների հետ միասին ներկայացնում է մի հոկայական կոնուսաձև լայնատարած հրաբխային մասսիվ, վոր իր բարձրությամբ թե՛ հայաստանի և թե՛ Անդրկովկասի ու Խորհրդային Միության սահմանների մեջ գտնված լեռների հետ համեմատած՝ առաջին տեղն ե բռնում: Նրան

* Մ. Վազներ «Ճանապարհորդությունի հայաստան» յերես 114:

կարելի յե դասել աշխարհի ամենամեծ հրաբուխների շարքում:

Այդ հսկա հրաբխային կենտրոնի կազմի մասին ավելի պարզ գաղափար կարելի յե կազմել նրա խառնարաններից դեպի ստորոտները ճառագայթաձև տարածվող անդունդավոր բացվածքներից, վորոնցից հրաբուխի մարելուց հետո, չնորհիվ հոսող ջրերի և բնության այլ քայլքայիչ տարրերի, առաջացել են խոր ձորեր:

Հրաբուխի կոնուսից ճառագայթաձև իշնող այդ տեսակ խոր ձորերը կոչվում են «Բառուանկոսներ»: Նրանց շարքին կարելի յե դասել Արագածի գագաթներից դեպի ստորոտներն իշնող Մանրաշի կամ Կարանլըխ կոչված ձորերը, Գյոզգալ դարայի, Դալի-գետի, Անքերդի և Արխաչենի ձորերը: Բացի այդ ձորերից, խառնարանում առաջ յեկած ուժգին պայթումները պատճու են լինում խառնարանի մասնավոր կամ ամբողջապես փլվելուն: Այդ պայթուններից մնացած խոր և լայն փոսերը, շրջապատված ցից ժայռերով, «Կալտեր» անունն են կրում:

Այդպիսի մի յերեսույթ նկատվում ե Արագածի խառնարանի արևելյան կողմում: Այստեղ առաջացած Կալտերից ե անցնում Գայլի-գետակը:

Հրաբխային լավաները, արտավիժելով Արագածի թե գլխավոր խառնարանից և թե պարագիտ կենտրոններից, ցածր են հոսել, միմիանց վրա դասավորվելով կամ կուտակվելով և այդպիսով ստեղծել են բազմաթիվ դարատափեր, կամ ինչպես ասում եյին, տեռուաներ, վորոնք, հետեա-

բար, իջվածքներով քաշանում են մինչև լեռան փեշերը: Այդ տեռուաները կտրատված են խոր ձորերով կամ վոքր հեղեղատային ձորակներով, վորոնք Արագածի կոնուսաձև բարձրունքից դեպի դաշտավայրերն են իշնում:

Դրանցից ամենաբնորոշ ձորակն Արագածի արևմտաշյին փեշերում գտնված Մասրաւյի Սելավի ձորակն ե, վոր իր մեջ ընդունելով բազմաթիվ ուրիշ հեղեղատաների ձորակներ և այլ ճյուղավորումներ, ոկղում անցնում ե ուղիղ դեպի հարավ, ապա միայն, թեքվելով հարավարևելք, համնում ե մինչև վոքր Մարդարաբատի դաշտավայրը:

Արագածի զանազան ժամանակներում արտավիժած լավաները թեև բազմատեսակ են, բայց իրենց ծագման և քիմիական բաղադրության տեսակետից իրար մոտ են: Նրանք բաժանվում են հինգ գլխավոր տեսակների, վոր պետրոգրաֆիական (քարագրության) տեսակետից վորոշվում են վորպես բազալտներ. անդեղիս-բազալտներ, անդեղիսներ, անդեղիս-դացիսներ, դացիսներ և այսպես կոչված, տուֆային լավաներ: Բացի այս գլխավոր քարատեսակներից, բավականին տարածված են նաև զանազան տուֆեր և այդ քարատեսակների մեկից դեպի մյուսն անցնող խառնուրդները: Այս բոլոր տեսակները, յեթե խմբերի բաժանենք, այն ժամանակ կարելի յե ասել, վոր Արագածի լավաները բաղկացած են գլխավորապես բազալտներից, անդեղիսներից և դացիսներից: Մնացած բոլոր տեսակներն այդ յերեք խըմ-

բերից առաջ յեկած լավաներ են՝ զանազան քի-
միական և հանգաբանական թեքումներով։ Այս
բոլորին պետք եւ ավելացնել նաև հրաբխային ար-
տավիժումների մի քանի տեսակի արդյունքները,
ինչպիսիներն են տուֆերը, պեմզաները, բազմա-
զան հրաբխային մոխիճները և այլ մանրունք-
ները։

Լավաները, թե՛ քանակի և թե՛ վորակի կող-
մից ամենից լրիվ և բարդ կազմով ներկայաց-
ված են Արագածի հարավային լանջերում, վոր-
տեղ բավականին յերկարությամբ տարածված են
լեռան գագաթից սկսած մինչև նրա ստորոտները՝
Անբերդի խորը ձորով, վորն Արագածի գեղողովիան
ուսումնասիրելու համար իրենից ներկայացնում
ե մի գեղեցիկ կարվածք։ Շնորհիվ այդ կարված-
քին ե, վոր հնարավոր ե լինում Արագած խառ-
նարանից հաջորդաբար արտավիժված Անբերդի,
Արխաշենի և Բյուրականի շրջանների լավաների
թե՛ քանակի և թե՛ վորակի մասին գաղափար կազ-
մել։ Այդ գեղողիական կտրվածքի միջոցով ու-
սումնասիրելով Անբերդի ձորի լավաների տեսակ-
ները և համեմատելով նույն Արագածի գագաթի
շուրջը տարածված լավաների հետ, պարզում ե,
վոր Արագած լեռան հրաբխային վերջին վիժ-
վածքները կամ լավային արտահոսումներն առաջ
են յեկել յերկու ցիկլի շրջաններում։

Առաջին ցիկլի շրջանում արտավիժվել են ան-
դեղիտ-բազալտ կոչված լավաների բազմազան
տեսակները, վոր մեծ կուտփածքներով ներկա-
յացված են Անբերդի ձորի շրջանում, Բյուրա-

կանի մոտ։ Այդ քարատեսակները, ծակոտկեն
բնույթի կրելով, կարծր և սև գույնի յեն։ Այստեղ
հանդիպում են նրանց մի քանի գունավոր տե-
սակները, բայց բոլորը պատկանում են նույն
քարատեսակի ընտանիքին։ Այդ քարատեսակները
Բյուրական—Ինսկուլով շրջանում ծածկված են
տուֆային լավաներով, իսկ Անբերդի ամրոցի
շրջակայքում կարմրագույն կամ մոխրագույն դա-
ցիսներով և անդեղիտ դացիսներով։ Նրանց շար-
քին են պատկանում նաև այդ շրջակայքում սը-
փուփած մոխրագույն լավաները և սև ձյութան-
ման քարաժայուերը։ Այս բոլոր բազմազան և բազ-
մագույն քարատեսակների բարդ կոմպլեկտն այդ
շրջանում բռնում է Արագածի մասսիվի մնած մասը։
Արտավիժումների յերկրորդ ցիկլի շրջանում տի-
րապետող լավաների մեջ մեծ տեղ են բռնում
անդեղիտ (բազալտների) լավաները, վորոնք ծած-
կում են Անբերդի ձորի աջ կողմի մասերը։ Ան-
բերդի ամրոցի ավերակներից վերև։ Այդ լավա-
ները տարածվում են Ալագյազի խանճարանից
մինչև Անբերդի ամրոցը, վորտեղ նրանց կուտա-
կումների հաստությունը հասնում մոտ 800
մետրի։

Այդ ցիկլի արտավիժումներին են պատկա-
նում հսկայական դացիսների վիժվածքները, վո-
րոնք տարածված են լեռան հարավային և արև-
մտյան լանջերում։ Պետք ե նկատել, վոր լավա-
ների զանազան տեսակի արտավիժվածքները հա-
վասար կերպով չեն տարածված հրաբուխի կենտ-
րոնի շուրջը։ Ամենալրիվ վուլկանային սերիան,

ինչպես յերկում ե, արտահայտված ե Արագածի հարավային և մասամբ արևելյան լանջերում։ Արևմտյան լանջերի լավաներն իրենց մի քանի առանձնահատկություններով մասամբ տարբերվում են այդ լանջերի լավաներից։

Խառնարանի շրջակայքում տարածված են գլխավորապես անդեղիտ-բազալտների, անդեղիտ-դացիտների, դացիտների բազմազան տեսակները։

Արագածի հարավ արևելյան շրջակայքում տարածված են գլխավորապես թուխ-կարմիր մանիշակագույն դացիտների զանազան տեսակներ և տուֆային լավաներ, վորոնք տեղ-տեղ ծածկված են մութ մոխրագույն անդեղիտներով։ Պատահում են նաև կարմրավուն և սևանման տուֆային լավաներ, ինչպես են ինակլու և Գետակու գյուղի մեջ տարածված գեղնագույն լավաները և Թաքիա գյուղի մոտի քարահանքերի տուֆային լավաները։ Նազրեան և Աշտարակ գյուղերի մեջ զարդացած են գլխավորապես անդեղիտի տեսակները։

Արագածի արևելյան լանջերում տարածվում են մեծ մասամբ անդեղիտ-բազալտներ, անդեղիտներ, անդեղիտ-դացիտներ և տուֆեր։

Հարավ-արևմտյան լանջերում՝ Թալին, Մաստարա և Աղիյաման գյուղերի շրջաններում զարդացած են գլխավորապես տուֆային լավաների տեսակները՝ դացիտներ, անդեղիտ-բազալտներ, անդեղիտներ, տուֆերի և տուֆային լավաների սերիաներ։ Վերջիններից աչքի յե ընկնում գլխավորապես Արթիկ գյուղի շրջակայքում տարած-

ված տուֆային լավաների տեսակը, վոր ներկայումս մշակվում է այդ գյուղի շրջակայքում։

Արթիկ, Սոնգուրլու, Մահմուդջուղ և Սուդյուղու գյուղերի շրջաններում տարածված են առհասարակ բաց-կարմիր մանիշակագույն տուֆային լավաներ, վորոնք Արագած լեռան այդ շրջաններում առաջ յեկած ճեղքերից գուրս յեկած վիժվածքների արդյունքներն են։ Այդ շրջաններում տարածված են նաև դացիտների, անդեղիտ-բազալտների լավաներ։

Հետաքրքիր ե նշել նաև Արագածի «պարագիտ» կենտրոններից մի քանիսի կաղմը, ինչպես են՝ Բերկլուի կրնուսի լավաները, վոր բաղկացած են դացիտներից, զանազան տուֆային լավաներից։ Փոքր Բողություն, վորն իրանով ներկայացնում է մի շարք արտավիժումների կենտրոն և շրջապատված է նրանից արտավիժված դացիտների մի ամբողջ կոմպլեկսով, պեմզաներով, մոխրագույն հրաբխային ավագներով և այլն։

Թեև վերկում հիշեցինք, վոր Արագածի բոլոր լավաները, պատկանելով քարատեսակների մի վորոշ սերիայի, միմիանցից տարբերվում են գլխավորապես իրենց քիմիական բաղադրության թեքումներով, բայց պետք է այստեղ նշել, վոր Արագածի արևելյան և հյուսիս-արևելյան մասերում չեն հանդիպում այդ տուֆային լավաների տեսակները, վորոնք տարածված են արևմտյան և հարավային կողմերում։ Բացի զրանցից հյուսիս-արևմտյան կողմի լավաներից մի քանիսը զանազանվում են իրենց տեսակով։



Այս մասում Բեկինդ և Խաչքիլիսա գյուղերի մոտ գտնված «պարաղիտ» Կաբախ-Թափա և Զիարաթ կոնուսների ժայթքումները տվել են բազալտի լավաներ: Այս լավաները տարածված են գլխավորապես Մանթաշի ձորի շրջանում:

Արագածի վիժվածքների մի քանի տեսակների գործնական նշանակության մասին արվելիք տեղեկությունները թողնելով հետագա նկարագրության, Արագածի գեղողիայի վերաբերյալ տված այս կարճ պատկերը լրացնելու համար անհրաժեշտ ենք համարում տալ Արագածի հիզրոգեղողիայի մասին մի քանի տեղեկություններ:

Հիզրոգեղողիայի գլխավոր առանձնահատկությունները կախված են մթնոլորտային տեղումների և տեղային քարատեսակների պայմաններից՝ այդ տեղումների վերաբերյալ, առաջնաներից կախված ե գլխավորապես նրանց քանակը, իսկ վերջիններից՝ այդ տեղումներն իրենց մեջ հստացնելը, ամբարելը և բաց թողնելը: Տարիների ընթացքում Արագածի շրջակայրում կատարած ողերևութաբանական (Լենինականի, Ղարաքիլի սայի և այլ կայարանների) ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր այդ շրջաններում պարփակված տարածության վրա տեղի յեն ունենում տարեկան միջին թվով 400—500 միլիմետր տեղումներ: Հայտնի յե, վոր այդ տեղումների քանակն ավելանում է տեղի բարձրության աստիճանների համեմատ: Արագածն ունենալով 4000 մետրից ավելի բարձրություն, նրա փեշերից ըսկած դեպի գագաթը տեղի ունեցող մթնոլոր-

տային տեղումների քանակը հետզհետե ավելանում է նրա բարձրունքներում: Այդ տեղումներն Արագածի ստորոտներում կամ լանջերում տեղալիս, տարվա մեջ նրանց մի մասը ծծվում է Արագածի քարատեսակների կամ հողերի մեջ, մյուսը գոլորշիանում ե, իսկ մի մասն ել հոսում է ցած, դեպի գաշտավայրերոց: Գագաթի շրջապատում, ընդհակառակը, տարվա մեծ մասում այդ տեղումները մնում են ձյունի կամ սառցի ձևով և միայն ամառվա սկզբին սկսում են հալչելու հոսել դեպի ցած:

Արագածի գագաթի շրջանում կազմվող սառուցների գոտին, ինչպես ցույց են տալիս կատարված ուսումնասիրությունները, առաջներում քավականին քաշացած ե յեղել այդ գագաթների շրջանից: Մի ժամանակ մինչև նրա լանջերի կեսը կազմված է յեղել սառցարաններից: Դրան ապացույց այդ սառցարաններից մնացած հետքերը—սառուցների թողած գծերը քարաժայուերի վրա, սառուցների բերած մնացորդները, վոր «Առնենելու» անունն են կրում և մի շարք այլ փատեր ցույց են տալիս, վոր Արագածի սառցարանների տարածության սահմանները բավականին մեծ տեղ եյին բռնում: Գիտության Ակադեմիայի վերջին տարիներում կատարած ուսումնասիրություններն ապացույցում են, վոր այդ սառցարանները մոտ 18,6 քառ. կիլոմ. տարածություն եյին բռնում: Ներկայումս, շնորհիվ կիմայի մեղմանալուն, Արագածի սառցարանների ընդհանուր մակերեսույթը, Ա. Պաստուխովի հաշ-

վով, հասնում ե մոտ 5 քառ. կիլոմ.: Այդ սառցարանների հաստությունը միջին թվով նա այն ժամանակ հաշվել ե մոտ $7^{1/2}$ մետր, իսկ այդ բոլոր սառցակույտների քանակը 1530 637 500 խոր. Փուտի, այսինքն՝ 142 249 287 խոր. մետրի:

Սառույցների և ձյուների կուտակումները գրեխավորապես տեղի յե ունենում Արագածի գագաթի շրջապատում առաջացած, այսպես կոչված՝ «ցիրկերում» (կրկեսաձև փոսեր), վորոնց թիվը Դիտության Ակադեմիայի աշխատակից Բ. Լիչիկովի տվյալների համաձայն՝ մոտ 13 եւ Բացի այդ կրկեսաձև փոսերից, Արագածի գագաթի շրջապատում և լանջերում կան բաղմաթիվ լճեր, վոր առաջ են յեկել սահմանափակ փոս տեղերում մթնոլորտային տեղումներ հավաքելուց: Դրանց թիվը, Պաստուխովի տվյալներով, միայն հյուսիսային և արևմտյան լանջերում մոտ 42 ե, իսկ Բ. Լիչիկովի ասելով, Արագածի բոլոր լճերի թիվը հասնում ե հարյուրի: Այդ լճերից շատերը ամառը չորանում են: Նրանցից ամենամեծը և խորը Կարա-Գյոլն ե, վոր գտնվում ե Արագածի գլխավոր գագաթից դեպի հարավ, մոտ $3^{1/2}$ կիլոմետր հեռու, 3207 մետր բարձրության վրա: Նրա շրջապատը հավասար է 1150 մետրի: Կարա-Գյոլից մոտ 1250 մետր դեպի հյուսիս-արևմուտք գտնվում ե Բագու-Գյոլ լիճը, մոտ 3128 մետր բարձրության վրա: Այս լճի շրջագիծը հավասար է մոտ 1200 մետրի: Այս վերջին լճից դարձյալ հյուսիս-արևմուտք տեղափորված ե թանիշ լիճ՝ 3274 մետր բարձրու-

թյան վրա: Թանիշ լճից մոտ 3 կիլոմետր հարավ-արևմուտք, մի փոքր տարածության վրա տեղափորված են 5 ուրիշ փոքր լճեր: Բազմաթիվ լճեր գտնվում են նաև Արագածի ավելի ստորոտային մասերում, վորոնցից մի քանիսից ոգտվում ե շրջակա գյուղացիությունը թե անասունների և թե իրենց պետքերի համար: Այդ լճերի մեծ մասը առաջ են գալիս գլխավորապես գարնանային ձյուների հալչելուց, վոր գիգվում են քարակույտերի վրա: Վերջինները կուտակված լինելով Արագածի լանջերի վրա, նպաստավոր դեր են կատարում ձյունը հավաքելու պրոցեսում: Այդ քարակույտերն ավելի մեծ մասշտաբով ներկայացված են գագաթի շրջապատում, վորտեղ նրանք շատ տեղերում կազմում են, այսպես կոչված՝ «Քարածովեր», այսինքն՝ լեռկ քարեր կամ վիմաքարերի կուտակումներ, վոր բռնում են ահազին տարածություններ՝ բոլորովին զուրկ բռւսականությունից: Այդ վիմակույտերը կամ քարակույտերը նպաստելով մթնոլորտային տեղումները հեշտությամբ իրենց մեջ ամբարելուն, մի վորոշ տարածության վրա, գարնան դեմ, իրենց շրջակայթից բաց են թողնում բազմաթիվ աղբյուրներ: Այդ գարնանային առատ աղբյուրները հորդ կերպով բղխում են մինչև ամառվա սկիզբները, իսկ այնուհետև նրանցից շատերը կամաց պակսելով, չորանում են: Առհասարակ աղբյուրներով հարուստ են Արագածի բարձր լանջերը, վորոնց շնորհիվ ամառն այստեղ են կենտրոնանում խաչնարածներն իրենց հոտերով: Հայ

աշխատավոր ժողովուրդը մինչև իսկ իր յերգերի մեջ գովում ե Արագածի այդ քաղցրահամ ջրերը (Ալագյազը բարձր սար ե, «ջուրը հիվանդի դեղ ե» և այլն:)

Դժբախտաբար ջրերի այդ առատությունը տեղի յե ունենում Արագածի բարձր լանջերում, իսկ նրա ստորոտներում ջրի պակասության պատճառով բնակիչները մեծ նեղություն են կրում: Արագածի աղբյուրներից շատերը վերին լանջերում առատ բղխելուց հետո, իրենց հոսանքի ընթացքում կրչում են ճաքճքված և ճեղքավոր վիմաժայռերի մեջ և այլևս փոչ մի տեղ լույս աշխարհ չեն գալիս: Արարատ լեռան և Արագածի ջրերի այս առանձնահատկությունն աչքի յե ընկել դեռ շատ վաղուց: Բոլոր գիտական ուժերը, վորոնք զբաղվել են այդ լինդրով, սկզբներում հարց են տվել, թե ուր են կորչում Արարատի և Արագածի ջրերը: Շնորհիվ այդ լեռների հիգրոգեոլագիական առանձնատուկ պայմանների (վոր Խորհրդային Միության մյուս տեղերում այդ մասշտաբով և ձևով չեն տեղի ունենում), բնականաբար առաջ են յեկել մի շարք կարևոր հարցեր՝ Արագածի ջրերի վերաբերյալ: Արագածը գրավում է մոտ 3000 քառ. կիլոմետր տարածություն: Արագածի տված ջրերի քանակությունն այդ տարածության վրա մթնոլորտային տեղումների քանակի համեմատությամբ շատ քիչ ե համարվում, ուստի և բնականաբար հարց ե ծագում Արագածի ջրերի նվազության պատճառների մասին: Արագածի գագաթից և նրա լանջերից սկիզբ են

առնում Դալի-չայ, Աբարան գետերը. Կարանլիխ՝ իր Գյողալդարա և Կարանդու (Մանթաշի ձորի) վտակներով, Սոգյութլույի, Արխաշենի և Անքերդի գետակները:

Այդ յերեսույթի գլխավոր պատճառն Արագածի հրաբխային կազմվածքի և նրա քարատեսակների առանձնահատկություններն են: Բազարները, անդեղիտ-բազարները, դաշինները և նրանց բազմազան տեսակները լինելով ճեղքճեղքված, այդ ճեղքերի արանքներից բաց են թողնում մթնոլորտային տեղումներ, վորոնք իրենց ձանապարհին չպատճենով ջրերն արգելող այլ քարատեսակների և անց կենալով ծակոտկեն ու խոռոչավոր քարատեսակների խորշերը, իջնում են լեռան ամենացածր հորիզոնները:

Միայն այն կետերում, վորտեղ այդ ջրերը պատահում են նպաստող պայմանների, նրանց մի մասը դուրս ե գալիս հրաբխային քարատեսակների ճեղքերից՝ աղբյուրների ձևով:

Այդ աղբյուրների մեծ մասը, չնորհիվ հորդ մթնոլորտային տեղումների, շատանում են գարնան սկզբին, իսկ հետո սկսում են փչանալ: Դրա մի մասը մինչև իսկ բոլորովին կարգում ե:

Արագածի աղբյուրների բնույթի մասին վորոշ գաղափար կազմելու համար ավելորդ չենք համարում այստեղ բերելու Արագածի հյուսիսային ստորոտներում գտնված Արթիկ և Մամուգյուղ գյուղերի շրջակայքի աղբյուրների դեբիտի (ջրի քանակի) մասին մի քանի տեղեկություններ: Արթիկի տուֆային լավայի արտահ-

Նության համար վորոշ քանակության ջրի պետք ունենալով, այդ աղբյուրների ջրերը վեց ամսվա ընթացքում պարբերաբար չափումների յենթարկվեցին, վորը տվեց հետևյալ հետևանքները.

Արքի լեվ Մահմուդզուլի աղբյուրների ջրի չափումների հանակը՝ հաճվելով որպես խորանարդ մետրներով:

Զամելու ժամանակը 1929 թվ.	Աղբյուր թիվ 4 (Գյուլի բուքալին) Վարդ աղբ.	Քոռակուր Բոռակուր Վարդ աղբ.	Արթիկի յի- կեղեցու մոտ գտնվող աղբյուր	Արթիկի կենարունի աղբյուր
Հուլիսի 7-ին	2592 խմ	7.80 խմ	68 խմ	68 խմ
Սեպտ. 11 >	270 >			
Հոկտ. 12 >	196 >	8 >		
> 15 >		8 >		
> 25 >		7 >		
Նոյեմ. 10 >	113 >	Բոլոր չոր	25 >	10 >

Այս տախտակը պարզ ցույց է տալիս, թե վորքան ե այդ աղբյուրների ջրի քանակը յենթարկվում տատանումներին: Այս յերեսությն է պատճառը, վոր Արագածի հարավարևմտյան լանջերում գտնված գյուղերը աշնանը, նամանավանդ ձմեռը, ջրի նեղություն են կրում և շատ գյուղեր ստիպված են ոգտագործել ձյունը հալելով, այսպես կոչված, «մուսխիներում»: Այդ անունով մինչև իսկ գոյություն ունի Արագածի արևմտյան ստորոտում Մուսխլու գյուղը: Մուսխլուների պրոցեսը կայանում ե նրանում, վոր ձմեռը դարսվելով գոմերի կտուրների վրա, գյուղացիք

գոմերի ծայրամասերում թողնում են մի ծակ: Ախոռից անասունների տաքությունը և գոլորշին դուրս ե գալիս, հալցնում ե այդ ծակի շուրջը կիտված ձյունը, վորը կաթիլ-կաթիլ թափվելով ախոռի մեջ, ծակի տակ դրած քարից պատրաստած «գուռուր» (փոսացրած քար) ծառայում ե վորուես անասուններին խմելու ջուր: Մի քանի գյուղերում գյուղացրիւթյունն այդ սիստեմն ոգտագործում ե խմելու կամ իր այլ կարիքների համար ջուր պատրաստելու նպատակով:

Արագածի հիգրոգեոլոգիական առանձնահատկությունները նպաստավոր պայմաններ չեն ներկայացնում գեղողողիական սովորական մեթոդների վորոնումներով հեշտ ձեռվ ջուր ստանալու ստորոտներից:

Այդ ե պատճառը, վոր Գիտության Ակադեմիայի վերջին տարիներու կատարած սովորական ուսումնասիրություններն Արագածի շուրջը վոչ մի արդյունք չտվին: Արագածի շրջակայքի բնակչությունը մեծ ջանքեր ե գործ դրել նրա լանջերից ջուր գուրս բերելու, բայց այդ ճիգերն իզուր են անցել: Շատերը, խաբվելով Արագածի փեշերի վրա մի քանի տեղերում լսվող ջրի ձայնի նման խշխոցներից, աշխատանք են գործ դրել այդ տեղերից ջուր գուրս բերելու: Այսպես, որինակ, Արագածի հարավային փեշերի մոտ գրանված «Գոգու» կոչված տեղում, Կու, Արքիկ և մի շարք այլ գյուղերի շրջակայքում գտնված այրերում և փոսերում ջրի ձայները շատերին ե հուսաղբել այդ տեղերից ջուր ստանալու: Այդ

այրերում կամ փոսերում մինև իսկ դեռ հին ժամանակներում գետինը քանդել, բայց այդ ջանքերն իզուր են անցել: Այդ լսվող ձայները վոչ թե ջրի, այլ քամու ձայներ են: Տաք և ցուրտ ողի փոխանակությունը վիմաքարերի ճեղքերի միջից առաջ են բերում ջրի ձայների նման տարրինակ ձայներ, վոր հետեանք և այդ փոխանակություններից առաջ յեկած քամիների հոսանքների:

ԱՐԳԱՇԻ ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Ա. «ՎՈՉ ՄԵՏԱՂԱՅԻՆ» ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանքային հարստություն ասելով հասկանում ենք գեղողիական այնպիսի ոգտակար հանածոներ (ուլություն ունեցած պայմանների շրջանում տրնտեսագես ձեռնտու կամ կարեոր նշանակություն ունի): Որինակ՝ Զանգեզուրի պղնձի հանքերի մշակման ընթացքում, մոտ 85 տարի շարունակ հալոցի չեն յենթարկվել միջին թվով մոտ 2 տոկոս պղնձ պարունակող հանքաքարերը և տարրիների ընթացքում դեռ են շպրտվել ձեռնտու չինելու պատճառով, ուստի այդ նվազ տոկոսով պղնձաքարերն այն ժամանակ իրեւ հանքային հարստություն չեն համարվել: Ներկայումս, յերբ, գիտությունը և տեխնիկան հնարավորություն

են տալիս շահավետ կերպով ոգտագործել մինչև իսկ կես տոկոս պղնձ պարունակող հանքաքարերը, տարիների ընթացքում այդ դեռ ածած պղնձի աղքատ տոկոսով հանքաքարերն այժմս արդեն համարվում են իրեւ հանքային հարստություն: Հանքային հարստությունները բաժանվում են յերկու տեսակի՝ մետաքային յեվ վոչմետադային:

Սրագածի շրջանում թեև հայտնագործված են մետադային միներալների նշաններ, ինչպես, որինակ՝ յերկարի փայիլ, պիրիսի (ծծմբահրաքարի), պղնձի, տիտան պարունակող յերկարի (իլմենինիտ) և վոչ-մետադային միներալներից—ծծմբի հետքեր, բայց այդ բոլորը գործնական նշանակություն չունենալով իրանց չնչին քանակության պատճառով չեն կարող համարվել իրեւ հանքային հարստություններ:

Սրագածն իրեւ նորագույն հրաբխային կենտրոն, իր գործելու ընթացքում և մարելու շըրջանում շարունակ արտածինել ե ծծմբային գագեր, վորոնցից խառնարանի շրջանում առաջ են յեկել ինֆեածին ծծմբի պտկածե կամ սառուցի ծծակների նման կազմած շիթեր: Հրաբխային արդ անշան յերկույթներն առիթ են տվել մինչև իսկ մեր աշխարհագրության ձեռնարկների մեջ հիշելու, թե Սրագածի գագաթին ծծմբի հանքային յերկույթներ կան և վոր քուրդ խաշնարածներն ոգտագործում են այդ ծծումբը, Սրագածի խառնարանի անմատչելի ժայռերի ծերպերից, հրացանի գնդակների միջոցով պոկում են ինքնածին ծծմբի

այդ շիթերը։ Ծծմբի այդ նշաններն առիթ տվին Յերեանի նախկին նահանգապակետներից մեկին, 50-ական թվականներին հետախուզումներ կատարել, վորոնք բացասական հետևանքներ տվին։ Վոր Արագածի խառնարանի շրջապատում ինքնածին ծծմբի հետքեր կարող են լինել, դրանում կատած չկա, բայց դա հրաբխային մի բնական յերևույթ է, այդ յերևույթով հրապուրվելով Արագածի խառնարանում ծծմբի հանքային հարստություն վորոնելն իզուր ջանքեր ե։ Յեղած ծծմբի նշանները միայն միներալոգիական նշանակություն ունեն։ Արագածն իբրև նորագույն հանգած հրաբխային կենտրոն, իր մեջ չի պարունակում վոչ մի մետաղային հանքային հարստություն, վոր գործնական նշանակություն ունենաւ նրա հանքային հարստությունների շարքում կարող են դասվել մի քանի վոչ-մետաղային հանքային հարստություններ, վոր առատ կերպով ներկայացված են Արագածի հրաբխային շրջանում և վորոնք բավականին հետաքրքիր նշանակություն ունեն։

Արագածի այդպիսի վոչ-մետաղային հանքային հարստությունների շարքին են պատկանում զանազան տեսակ պեմզաներ, ինչպես ժողովուրդներ անվանում ե՝ անհոգի կամ անշունչ քարեր (այդպես են անվանում յերևի նրանց թեթելության պատճառով), ոբսիդիանները (ապակյա քարատեսակները), վոր հայտնի յեն ժողովրդական սատանի յեղունդ անունով, բազալտները յեվ դիատոմիսները։

Պետք ե այստեղ նշել, վոր այդ հանքային հարստություններից մի քանիսը գտնվում են Արագածի այնպիսի բարձրագույն վայրերում, վորտեղից նրանց տեղափոխելը, ճանապարհների բացակայության, անմատչելիության, հեռավորության կամ տնտեսական վոչ ձեռնտու պայմաններում, գժվար և թանգարժեք, ուստի այդպիսիները կորցնում են իրենց գործնական նշանակությունը և նրանք չեն կարող հաշվել իբրև հանքային հարստություն։

ԱՐԱԳԱԾԻ ՊԵՄԶԱՅԻՆ ՀԱՆՔԱՏԵՂԵՐԸ

Պեմզա բառը ոռւսական ե։ Պերմաներեն ասում են բիմշտեյն (bimsstein), անգլիերեն — պրմիս (prumice), Փրանսերեն պոնս (ponce) կամ ապակու փրփուր (écume de verre), մենք անվանում ենք չեչաքար, կամ, ավելի ճիշտ, անհոգի քար և այլն։ Պեմզան կամ չեչաքարը իրանից ներկայացնում ե թեթև, ծակոտկեն, առանձնահատուկ բնույթ ունեցող մի միներալ։ Տեսքով նասպունդանման ե, յերբեմն փայտակերպ, մետաքսանման փայլուն, մազային ստրուկտուրայով, վոր հիշեցնում ե փայտի կտորներ։ Նրա մանը կամ խոշոր ծակոտիները յերբեմն լինում են խոռոչաձև։

Գույների տեսակետից նա լինում ե գեղնագույն կամ ժանգագույն-սև, կարմրագույն, յերբեմն մոխրագույն կամ բաց կապտագույն տեսքով։ Նրա տեսակարար կշիռը, շնորհիվ նրա ծագությունը առաջանաւ է առաջին ամսագույն գույնու համար։ Արագածի պատճենները առաջանաւ են առաջին ամսագույն գույնու համար։

կոտկենության, շատ թեթև ե, ուստի նա լողում ե ջրի մեջ։ Նրա մի քանի տեսակներն ապակիաւնման են։

Պեմզան կամ չեչաքարը լավաների վերևի շերտերի գաղ պարունակող հեղուկ մասերն են, վոր հրաբուխների խառնարաններից կամ ձեղքերից դուրս նետվելով, կորցնում են իրենց գաղերը և սառչելով, ծակոտկեն բնույթ են ստանում։ Իրենց բաղադրության տեսակետից նրանք գլխավորապես պարունակում են սիլիցիում ոքսիտ (SiO_2) մինչև 72 տոկոս, ալիումինահող (Al_2O_3) մոտ 17 տոկոս, և համեմատաբար չնշին քանակությամբ կրային, մագնիզային, յերկաթային և այլ քիմիական տարրեր։ Արագածի պեմզաները գտնվում են գլխավորապես հրաբխային կենտրոններում։ Շըրջապատում նրանք պատահում են մանր ավազի ձևով սիսեռի, տիխիլի կամ ընկույզի մեծությամբ։ Հազվագյուտ դեպքում հանդիպում են և կես խորանարդ մետր ծավալով։ Համեմատաբար ավելի քիչ են պատահում բոռնցքաչափ կամ քիչ ավելի մեծ չափով, վորն արդյունաբերության մեջ գործ ե ածվում զանազան տեխնիկական կարիքների համար։

Պեմզաները, բացի շինարարական պետքերի համար, առնասարակ մեծ նշանակություն ունեն արդյունաբերության բազմատեսակ ճյուղերի կարիքների համար։ Նրանք գործ են ածվում զանազան մետաղների, քարերի, փայտեղենների հըղկման գործում, վորի համար պահանջվում ե բըռունցքաչափ կամ ավելի մեծ կտորներ, ինչպես

ատաղձագործության, մարմարների, լիտոգրաֆիական քարերի, մետաղագործության և արդյունաբերական այլ ճյուղերում, որինակ՝ թաղիքներ, ոճառ, ոետին, ապակեղեն պատրաստելիս և առնասարակ մի շարք արդյունաբերության մեջ։

Պեմզաների այդ գնահատելի հատկություններն են, վոր թույլ են տալիս նրան դասել հանքային հարստությունների շարքը։

Արագածի շրջապատում մինչև այժմ հայտնագործված են հետևյալ հանքավայրերը, վորոնցից միայն մի քանիսն են ներկայումս մշակվում և արտահանվում Միության զանազան կողմերու շինարարական արդյունաբերության կարիքների համար։ Նրանցից ամենախոշոր տեղը բռնում են այն հանքավայրերը, վորոնք, ճանապարհների մոտիկության, հարմարության շնորհիվ, կարող են ներկա պայմաններում մշակվել։ Մնացածներից մի քանիսն իրանց աննպաստ պայմանների շնորհիվ մնում են անմշակ։

1) Մահմուդզուլի հանքատեղերը։ Պեմզայի կամ չեչաքարի այս հանքավայրերը գտնվում են Լենինականից 25 կիլոմետրի, իսկ Արթիկից 4 կիլոմետրի վրա, վոր միացած է Լենինականի հետ յերկաթագծով։ Այստեղ հայտնագործված են թե մանր և թե խոշոր պեմզաների հանքատեղեր։ Չեչաքարի մեծ կտորները համեմատաբար քիչ են։ Ավելի փոքր կտորների քանակն ե (2-ից մինչև 7 սմ մեծությամբ), վոր տիրապետող դեր ե կատարում։ Բավականին մեծ քանակությամբ ներկայացված են նաև $1/2$ -ից մինչև 2 սանտիմետր

մեծություն ունեցող մանրունքները։ Համեմատաբար շատ տարածված են պեմզայի մանրունքները։ Ավելի քիչ են 30 խորանարդ սանտիմետր մեծություն ունեցող կտորներ։ Կա նաև մեծ քանակությամբ ավազանման պեմզայի մանրունք։

Հանքատեղերից մեկն անմիջապես Մահմուդառուղի գյուղի մոտ ե (1^{1/2} կիլոմետր)։ Այս հանքատեղերը մշակում են և պեմզան արտահանվում ե։ Գեղողիական հետախուզումները մինչև այժմ հայտնագործել են Մահմուդառուղի շրջանում մոտ 218,000 խոր. մետր քանակությամբ պեմզայի պաշար։

2) Փոքր Բողուտավույի հանքատեղը։ Գիտության Ակադեմիայի կատարած ուսումնասիրությամբ պեմզաներ են հայտնաբերված փոքր Բողուտավութարագիտային հրաբուխի շրջակայքում, վոր գտնվում ե Արագածի հարավային ստորոտում։ Այսուեղ մի փոքր հետախուզությամբ բացված ե պեմզայի մի շերտ, մինչև 3 մետր հաստությամբ։ Այստեղի հայտնագործված պեմզաները զանազան քննույթ կրող կտորներից են, 6.-ից մինչև 8.-10 մմ մեծությամբ։ Պեմզաների ընդհանուր պաշարը պարզված չե։ Հանքատեղը գտնվում է յերկաթուղուց 30 կիլոմետր հետախորության վրա։

3) Բերգլուի պեմզաները գտնվում են Արագածի ստորոտի հարավ-արևմտյան, Իրինդ և Մեհրաբան գյուղերի շրջաններում, Բերգլու կոչված հրաբխային կոնուսի հարավ-արևմտյան լանջերի վրա, վորտեղ հանդիպում են սպիտակ և դեղնագույն պեմզաների տեսակներ։ Պեմզաների ներ-

քնի շերտերը, 2—2^{1/2} մետր հաստությամբ, բաղկացած են պեմզայի մանրունքներից 1^{1/2}-ից մինչև 2 սանտիմետր և ալիքի փոքր չափերով։ Դեղնագույն պեմզաների մանրունքների շերտերի հաստությունը հասնում է 2 մետրի։ Բացի այս տեսակետից, կան մեկ տեսակից մյուսն անցնող վոչ մաքուր պեմզաների խառնուրդներ։ Այս հանքատեղերը յերկաթուղուց մոտ 25 մետր հեռավորություն ունեն՝ հաղորդակցության վատ ճանապարհներով։

4) Աղջաղալայի հանքատեղը նույնպես գըտնվում է Արագածի հարավ-արևմտյան ստորոտներում, մոտ 4 կիլոմետր հեռու, Բերգլուի հանքատեղից գեպի հարավ-արևելք, վերին Աղջաղալա և Յաշել գյուղերի մեջ յեղած կոնուսաձև հրաբխային պարագիտ կենտրոնի արևելյան փեշերում։ Այստեղ հանդիպում են զանազան բնույթ կրող պեմզաների մանրունքներ։ Հանքատեղը, վոր գտնվում է յերկաթագծից մոտ 20 կիլոմետր հեռավորության վրա, բոլորովին հետախուզված չե, ուստի հայտնի չե նրա պաշարի քանակությունը։

5) Թափիայի հանքատեղը գտնվում է Փարբեցյուղից մոտ մեկ կիլոմետր հյուսիս, յերկաթուղու գծից 40 կիլոմետրի վրա։ Այստեղ առւֆերբակ մոտ 2^{1/2} մետր հաստությամբ, կա շերտաձև պեմզայի մանրունք, վոր միջին թվով 2^{1/2} և 3^{1/2} սանտիմետր մեծություն ունի։ Նրանց պաշարի քանակը պարզված չե։

6) Ամբարլուի հանքատեղը գտնվում է Արագածի Ալիքուչակ գյուղի մոտ։ Այստեղ յեղած

պեմզան. բաղկացած ե մանրունքներից, մոտ 6 մետր ունեցող շերտ հաստությամբ։ Այս հանքատեղերի մեծ մասը, յերկաթուղու գծից հեռու լինելու պատճառով, ներկայում գործածական նըշանակություն չունի։

Պեմզաներից հետո, Արագածի հանքային հարստությունների շարքին պետք ե դասել պեմզաների հետ սերտ կապ ունեցող ոբսիդիաները։

ՈԲՍԻԴԻԱՆԵՐԻ ՀԱՇՔԱՏԵՂԵՐԸ

Բոլոր ազգերի լեզվով, միներալոգիական ձեռնարկներում, ոբսիդիա յեն կոչվում հրաբխային ապակիանման լավաները, վոր հայտնի յեն նաև նրաբխային ապակի անունով։ Մեր ժողովուրդը անվանում է «սատանի յեղունդ»։ Լավաները հրաբուխների խառնարանից կամ ճեղքերից դուրս գալուց հետո, յեթե զանազան հանգամանքների պատճառով արագ են սառչում, ընդունում են ապակիանման կազմություն։ Այդ ապակիանման լավաները լինում են յերբեմն շատ թափանցիկ կամ կիսաթափանցիկ։ Նրանցից մի քանի տեսակները, նայած նրանց սառչելու արագությանը, ստանում են քարային հատկություններ, այսինքն՝ դառնում են անթափանցիկ և դրժվար են կոտրվում։ Առհասարակ ոբսիդիաները կոտրելիս ստացվում են, շշերի ապակու նման, գոգավոր գծերով և սուր ծայրերով կտրներ։ Ոբսիդիաները լինում են բոլորովին սպիտակ ապակու նման մոխրագույն, և սկզբանի ջութիւն

նման) կամ կարմիր և սև շերտերով, գոլավոր, մութ, գորշ և բաց մոխրագույն, մետաքսափայլ։ Ոբսիդիաները քիմիական տեսակետից ունեն այն լավայի կամ քարատեսակի բաղադրությունը, ինչ լավայից վոր առաջ են յեկել իրենք։ Նրանց քիմիական բաղադրությունը համարյա մոտենում է պեմզաների բաղադրության։ Ոբսիդիաները գործ են ածում գլխավորապես հեղուկների համար շշեր պատրաստելու։ Նրանք իրենց բաղադրությամբ, իրենից պատրաստի նյութ են ներկայացնում գունավոր շշեր պատրաստելու, յեթե նրանց բաղադրության հետ խառնում ենք մոտ 10 տոկոս կրաքար և նույնանում նատրիումի սուլֆատ։ Նրանցից պատուհանների ապակիներ չեն պատրաստում՝ հստակ ապակի չստացվելու պատճառով։

Ոբսիդիաները, թթվուաներին դիմանալու պատճառով, գործ են ածվում քիմիական արդյունաբերության մեջ՝ թթու աղեր պատրաստելու գործում։ Ոբսիդիաները, իրեւ թթվուաների դիմացող նյութեր, 10 անգամ ավելի դիմացկուն են, քան թե անդեգիտի քարատեսակները, վոր ներկայումս մշակվում են վրաստանում և արտահանվում քիմիական գործարանների պետքերի համար։ Այդ փորձերի համար վերջերս միայն սկսել են մշակման յենթարկել չայաստանի յերկաթուղային Արագածի կայարանի շրջակայքում գտնված ոբսիդիաների հանքերը։

Ոբսիդիաների գեղեցիկ տեսակներից պատրաստում են զանազան կոճակներ, կը ծքին կպցը-

նելու զանագան զարդեր և այլն։ Գործածում են նաև զանազան տեսակ կնիքներ ու այլ մանր իրեր պատրաստելու համար։

Արագածի շրջապատում ոբսիդիաների հանքատեղերից միայն Արագած կայարանից 6—7 կիլոմետր դեպի հյուսիս գտնվող մի փոքր հրաբխալին կենտրոնի մոտ հայտնագործված հանքատեղն է, վոր սկսել են շահագործել։ Այստեղ հայտնագործած ոբսիդիաների հանքատեղերը դեռ ուսումնասիրված չեն, ուստի և ոբսիդիաների քանակությունը վորոշեցեա:

ԲԱԶԱԼՏՆԵՐԸ

Բազալտի մի քանի տեսակները, բացի շինարարական պետքերից, վերջին յերկու տասնյակ տարիների ընթացքում սկսվեցին գործածվել նաև քիմիական ու ելեկտրարական արդյունաբերության կարիքների համար։ Այդ պատճառով այդ տեսակները գնահատելի յեն և վորակվում են իբրև հանքային հարստություն։ Բազալտները, սկզ, մուժ, կամ բաց մոխրագույն տեսքով հրաբխային քարատեսակներ են, վորոնք իրենց մեջ պարունակում են 40-ից մինչև 52 տոկոս, յերբեմն ավելի սիլիցիումի ոքսիդ (SiO_2), 10—20 տոկոս ալիումինահող (Al_2O_3), մոտ 8—15 տոկոս յերկաթ, 2—4 տոկոս նատրիում, մոտ նույնքան ել կալիում, մինչև 10 տոկոս կիր և այլն։

Նրանք հալվում են 1300 աստիճան տաքության մեջ։ Բազալտների մի քանի պետքական

տեսակները հալում են ելեկտրական վառարանների միջոցով և ապա հալած մասսայից ձուլում զանազան իրեր՝ ելեկտրական և քիմիական արդյունաբերության համար։ Որինակ՝ ելեկտրական լարեր անցկացնելու մեկուսացուցիչներ, քիմիական արդյունաբերության համար թթվուտներին դիմացող անոթներ, ամաններ և այլն։ Շինարարության համար՝ ձուլված խողովակներ, մայթերի և շինարարական այլ կարիքների համար նյութեր։ Բազալտի քարատեսակները տարածված են մեծ մասամբ Արագածի հյուսիս-արևմտյան կողմում։ Մանթաշի ձորի շրջանում։ Արխվալի և Բաշդյուզ գյուղերի շրջաններում, նաև Արագածի հարավային փեղերում, Այղը լճի շրջակայքում և Ախուրյան (Արփա) գետի լեռնատափաստաններում՝ յերկաթուղու գծի ուղղությամբ։ Այս վերջինները, գծին մոտ լինելով, ունեն ավելի գործնական նշանակություն։

ԴԻԱՏՈՄԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՏԵՂԵՐԸ

Մինչև այժմ Արագածի շրջակայքում դիատոմիտի հանքատեղերից հայտնագործված ե Փարբի գյուղի մոտ բացված հանքատեղը։

Դիատոմիտ կոչվում է փուխր, յերեմն պընդացած, սպիտակ, կավճանման մի հողածև մասսա, վոր, համարյա ամբողջապես կամ մասամբ, կազմված ե դիատոմեա կոչված բուսական ծագում ունեցող միկրոորդանիզմների կմախքային մնացորդներից։ Այդ կմախքային մասսի վարձն ամ-

բողջապես բաղկացած են սիլիցիումի ոքսիդից (SiO₂): Այդ բուսական ծագում ունեցող միկրորգանիզմները շատ արագ զարգանում են լճերի կամ առհասարակ ջրերի մեջ և արագ ել վոչնչանում: Նրանց մնացորդները տարիների ընթացքում նստելով կանգնած, հանդարտ ջրերի տակ, կազմում են յերբեմն հաստ շերտեր: Դիմատոմիտների ընտանիքին պատկանող միկրոռգանիզմները բազմատեսակ են: Այդ տեսակների թիվը 2000-ից անցնում է: Փարբի գյուղի մոտ յեղած նախկին մի բավական մեծ լճակի ավազանի մեջ առաջ ե յեկել դիմատոմիտների մնացորդներից կազմած, մոտ 8 մետրից ավելի, հաստ շերտ: Փարբու մոտ կատարված գեոլոգիական հետախուզումները հայտաբերել են դիմատոմիտների պաշարը, միայն մի փոքր հողաբաժնում, առայժմ՝ 30,000 տոնն: Հույս կա, վոր ապագա հետախուզումները Փարբի գյուղի շրջանում կհայտնագործեն այդ հանքատեսակի նոր պաշարները: Դիմատոմիտը գործ ե ածվում իբրև մեկուսացուցիչ (անջատիչ) նյութ, շոգեխողովակները, շոգեկաթսաները ցրտից, իսկ սառցարանները տաքից պաշտպանելու համար: Նա գործ ե ածվում դիմատոմիտ, հեղուկ ապակի, այսպես կոչված, «կոշտ սպիրո» պատրաստելու գործում: Նա ընդունված ե իբրև խառնուրդ ոճառ, ոետին, ուլտրամարին, ցեմենտ պատրաստելու գործում: Նա գործ ե ածվում մի շաքր արդյունաբերական այլ ճյուղերի կարիքների համար: Նաև գործ ե ածվում իբրև շինարարական նյութ:

Բ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Արագածի վոչ-մետաղային հանքային հարստությունների համառոտ նկարագրությունը տալուց հետո, կարևոր է մի քանի խոսք ասել Արագածի շինարարական նյութերի մասին:

«Արագածը գեոլոգիական տեսակետից» նախընթաց հակիրճ տեսության մեջ հիշած քարատեսակները՝ բաղալտները, անդեզիտ-բազալտները, անդեզիտները, դացիտները, նմանապես տուֆային լավաները, տուֆերը, պեմզաները, դիմատոմիտները, այս բոլորը շինարարական նյութեր են համարը, վոր գործ են ածվում մեծ մասամբ տեղական կարիքների համար, իսկ մի քանի քարատեսակները, ինչպես հայտնի յե, որինակ՝ տուֆային լավաները, տուֆերը և պեմզաներն արտահանվում են Միության զանագան կողմերը շինարարական կարիքների համար: Այդ քարատեսակներից բազալտները, անդեզիտ-բազալտները, անդեզիտները, դացիտները գործ են ածվում առայժմ բացառապես տեղական գյուղական շինարարության համար: Սրանք Արագածի այն լավային տեսակներից են, փորոնց մեջ, սկսած բազալտից, հիշած կարգով դասավորված, սիլիցիում ոքսիդի (SiO₂) քանակությունը, քանի անցնում է հետևյալ քարատեսակին, այնքան ավելանում է: Այդ քարատեսակները լինում են սև, մութ, գորշ կամ բաց մոխրագույն, յերբեմն գունատ կարմրավուն, միապաղպաղ, պինդ ու կարծր և դժվարությամբ են տաշվում: Ամենից հեշտ տաշվում

Են տուֆերը և տուֆային լավաները։ Տուֆեր կոչվում են հրաբխային այն քարատեսակները, վորոնք ամբողջապես կազմված են հրաբխային վիժվածքների զանազան մասը կտորտանքներից, վոր, ժամանակի ընթացքում սեղմվելով և միմիանց կպչելով, ամրացել և քարացել են։ Արագածի տուֆերը բավականին ծակոտկեն ու թեթև են և ջուր ծծող։ Այս վերջին հատկությունից ոգտվելով, այդ տուֆերը գործ են ածում իբրև ջրի հավանելիք՝ պղտոր ջրերը դտելու համար։ Նրանք լինում են զանազան գույների՝ սև, կարմիր, վարդագույն, բոված սուրճի գույնի և այլն։ Իբրև շինարարության քարեր, նրանք հեշտ տաշվող և յերկար դիմացող են։ Արագածի շըրջակայքում գտնված բոլոր հայկական հին խոշոր շինությունները, նախկին վանքերի, տաճարների և այլ հիմնավոր շինությունները պլխավորապես այդ տուֆերից են կառուցված։

Ավելի գնահատելի տեղ ե բոնում, այսպես կոչված, «Արթիկի տուֆը», վոր սխալմամբ այդ անվան տակ ե արտահանվում։ Արթիկի քարատեսակը տուփ չե, այլ իր թեթեռության, ծակոտկենության պատճառով, նման լինելով տուփի, նրան տրվել ե այդ անունը։ Արթիկի քարատեսակն, այսպես կոչված՝ «Տուֆային լավա» յի, վորն Արագածի ձեղքերից արտահոսելով, իր մեջ մեծ քանակությամբ պարունակած գաղերից ազատվելուց հետո, ծակոտկեն և թեթև բնույթ ե ստացել։

Արթիկի տուփային լավաները և նրա տեսակ-

ները մեծ տարածությամբ սկսված են Արագածի լանջերի վրա։ Սկսած Արթիկի շրջանից, նրանք գոտիկաձև ընդգրկում են ամբողջ Արագածի հյուսիսային կողմի մի մասը, իսկ արևմտյան և հարավային շրջանների մասերից—Աղեյաման, Մաստարա, Թալին, Թալիշ և Բյուրական գյուղերի շրջանները։ Այս տուփային լավաներից են շինոված այդ գյուղերի գյուղական տները և հին շինությունները, վորոնց մնացորդները մինչև որուկայուն են նույն գյուղերի շրջաններում։

Այս բոլոր տուփային լավաների քարատեսակներից ամենից շատ գործնական նշանակություն ունեցան Արթիկի շրջակայրի տուփային լավաները, վորոնց պատճառով խորհրդային իշխանության ջանքերով հատուկ յերկաթագիծ անցկացվեց, և այժմ այդ տուփային լավաները մշակվում ու արտահանվում են թե Խորհրդային Հայաստանի և թե Միության մյուս հանրապետությունների շինարարական կարիքների համար։

Այդ տուփային լավան, շնորհիվ իր առանձնահատկությունների, մեծ դեր ե կատարում ներկա շինարարական աշխատանքներում։ Տուփի առանձնահատկությունն այն ե, վոր նա.

1. Թեթև ե, սպունգանման ծակոտկեն լինելու պատճառով։

2. Նրա մի խորանարդ մետրի ծավալային կշիռը, միջին թվով, հավասար է 1108 կիլոգրամի։

3. Ամրության տեսակետից, նրա մի քառակուսի սանտիմետրը, միջին թվով, գիմանում է 83 կիլոգրամ ծանրության։

4. Տաքության հաղորդության գործակիցը՝
հավասար ե 0,30:

5. Ծակոտկենությունը — 60,86 տոկոսի:

6. Զուր ծծելու ընդունակությունն իր ծա-
վալի հատ համեմատած 36,25 տոկոս ե:

7. Կրակի մեջ դիմանում ե մինչև 1120 աս-
տիճան տաքության:

8. Սաոցնելիս չի ճաքճռում և քայքայվում:

9. Հոտի համար վատ հաղորդիչ ե:

10. Հեշտ տաշվում, սղոցվում, մեխվում ե.
Դյուրությամբ կարելի յե սոսիննձով տուֆային
լավաների կտորներն իրար կպցնել:

11. Կարելի յե առանց սպաղելու պատերի
մաքուր յերես ստանալ:

12. Այդ քարատեսակից կարելի յե զանազան
ձեր իրեր և տախտակաձե քարեր պատրաստել:

13. Զանազան ներկերով կարելի յե ներկել:

14. Կարելի յե ուղած ցանկությամբ կառո-
ներ ստանալ քարաժայուերից, վոր արագացնում
և շինարարության գործը:

15. Կարելի յե ցեմենտի կամ այլ հեղուկների
մեջ դնելով, նրա ծակոտկեն հատկությունը վե-
րացնել՝ ջուր չանցկացնելու դիտումով և այլն:

Ահա այս բոլոր առանձնահատկությունների
պատճառով ե, վոր Արթիկի տուֆային լավան,
մյուս շինարարական քարատեսակների հետ հա-
մեմատած, առաջնակարգ տեղն ե բռնում շինա-
րարական գործում:

ԱՐԱԳԱՇԻ ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արագածի գեղողիայի, հանքային հարսաու-
թյունների և շինարարական նյութերի վերաբեր-
յալ, սահմանափակվելով նախորդ կարճ տեսու-
թյուններով, այժմ մեզ մնում ե մատնացույց
անել Արագած լեռան մի քանի առանձնահատուկ
յերևույթները, վորոնք արժանի յեն առանձին
ուշադրության:

Արագածն իբրև նըրագույն հրաբխային կենա-
րոն, թեև զուրկ ե մետաղային հանքային հարս-
աություններից, բայց, ինչպես հիշեցինք, հա-
րուստ ե վոչ-հանքային հանածոներով, բազմա-
տեսակ շինարարական նյութերով, քաղցրահամ
ջրերով, առողջ կլիմայով, բարդավաճ հողերով,
փարթամ արոտատեղիներով և գեղատեսել բնու-
թյամբ: Արագած, լեռն իր փեշերով բռնելով Խոր-
հրպային Հայաստանի հյուսիս-արևմտյան սահ-
մանի մեծագույն մասը, չնայելով իր բարձրու-
թյան, շնորհիվ իր հարժար գիրքի և լայնատա-
րած թեք լանջերի, շատ մատչելի յե մասսայա-
կան եքսկուրսիաներ կատարելու համար: Առանձ-
նացած լինելով լեռնաշղթաներից և միմիանց մոտ
կուտակված լեռներից, Արագածն իր լանջերով և
մանավանդ գագաթների շրջակայքով եքսկուր-
սանտների առաջ բաց ե անում այնպիսի սքան-
չելի հեռավոր տեսարաններ, վորոնց նմանը հնա-
րավոր չե տեսնել Անդրկովկասի մյուս լեռների
բարձրունքներից:

Բացի հեռավոր գեղատեսիլ տեսարաններից, վերին աստիճանի զմայլեցուցիչ են Արագածի լանջերի սքանչելի արոտատեղերը՝ իրենց դալար և փարթամ բուսականությամբ, վորոնք արժանի յեն առանձին ուշադրության՝ հարուստ բուսական հավաքածուներ կազմելու համար։ Այդ բուսականության հազվագյուտ նմուշներն ունեն գործնական նշանակություն։ Որինակ՝ Արագածի լանջերում բուսնող, այսպես կոչված, «Լուի ծաղկները» շահագործվել են «Արագածի ծաղիկ» կոչումով՝ միջատների դեմ։

Բացի խաչնարածների կարիքներին բավարարելուց, նրա ճոխ բուսականության մեջ կան նաև այնպիսի հազվագյուտ տեսակներ, որոնց կարող են ոգտագործվել դեղագործության և ներկարարության համար,

Արագածի լայնատարած լանջերի առատ և բազմատեսակ բուսականության գոյությունը պարտական է նրա արգավանդ հողերի առանձնահատկությանը, նպաստավոր կլիմային, մթնոլորտային առատ տեղումներին և նրանցից առաջած վազող ջրերին ու աղբյուրներին։

Արագածի հողերը, վոր առաջ են յեկել լավաների և առհասարակ հրաբխային վիժվածքների քայլայումից և կազմալուծումից, շատ հարուստ են բուսականության սննդի համար, իրանց բոլոր կարևոր տարրերով։ Արագածի հողերը, նրա փեշերից սկսած մինչև գագաթների շրջապատը, զանազան բնույթ են կրում, նրանց բնույթը վորշելու համար հետաքրքիր ե Արագածի լանջե-

րից և գագաթների շրջապատից, բնորոշ տեղերից նմուշներ վերցնել ուսումնասիրության համար, անհրաժեշտ ե միայն քարտեզի վրա ձիշտ վորշել վերցրած նմուշների տեղը։ Միևնույն ժամանակ, հետաքրքիր ե նույն տեղերից վերցնել լավաների կամ հրաբխային այլ վիժվածքների նմուշներ։ Առհասարակ հարկավոր ե մի փոքրիկ թղթի վրա նշել վերցրած նմուշի տեղի և նրա այլ հատկությունների մասին և ապա փաթաթել մի ուրիշ թղթով կամ դնել փոքրիկ տոպլրակների մեջ ու համարակալել։

Այսպիսով Արագածի զանազան անկյուններում կարող են հայտնագործվել այնպիսի քարաւատեսակներ կամ վոչ-մետաղային հանածոներ, վորոնց մինչև այժմ վոչ վոք չի ուսումնասիրել։ Արագածի ամբողջ շրջապատում կարող են հայտնագործվել պեմզաների, որսիդիաների, գիատոմիտների նոր հանգատեղեր, վորոնք կարող են գործնական նշանակություն ունենալ։

Նմուշները վերցնելով, քիմիական կամ ֆիզիքական հատկությունները քննելուց հետո, հնարավոր կլինի փորոշել նրանց տեսակը, գործնական նշանակությունը և կարենորությունը։ Արագածի շրջակայքում, համարյա ամեն քայլափոխում, հանդիպում են զանազան հնադարյան վանքեր, ամրոցներ և այլ փառահեղ շինություններ, վորոնց շինանյութերը վերցված են անշուշտ նույն շինանյութերի շրջակայքից։ Հետաքրքիր ե հարց ու փորձի միջոցով տեղեկություններ հավաքել՝ այդ շինարարական նյութերի քարահան-

քերի տեղերը վորոշելու համար: Բացի շինարարական լավագույն քարատեսակներից, Արագածի շրջակայրում անշուշտ կարելի յե հայտնագործել պուցցոլաների, ոպոկների պեմզավազների և այլն հրաբխային մանրուքների նոր տեղեր, վրրոնք մեծ նշանակություն ունեն իբրև շինարարական նյութեր:

Արագածի շինանյութերն արդեն բավականին կարեռություն են ստացել Խորհրդային Միության հսկայական շինարարության գործում:

Արթիկի առուֆային լավաները, Մահմուդյուղի
և Անիի պեմզաները, պուցցոլաները հայտնագործելուց հետո, Հայաստանում բոլորովին նոր արդյունագործություն ստեղծվեց՝ շնորհիվ այդ շինանյութերի առանձնահատկություններին: Այդ նյութերը մշակելու համար յերկաթագծեր շինվեցին դեպի այդ հանքավայրերը: Նման և այլ շինանյութերի հայտնագործումը, բնական ե, նոր զարկ կտա Արագածի շրջակայրի տնտեսական զարգացման: Արագածի շրջակայրի հետազոտությունների մեջ ամենակարեւոր տեղը բռնելու յե Արագածի ջրերի ուսումնասիրության հարցը: Արագածը, թեև հարուստ ե ջրերով, լճերով և աղբյուրներով, բայց այդ ջրերից շատ դեպքերում շրջակա բնակչությունը հնարավորություն չունի ոգտվելու, շնորհիվ Արագածի գեղողիայի մի քանի առանձնահատուկ պայմանների: Այդ հատկությունները, ինչպես հիշեցինք առաջ, գլխավորապես կայանում են նրանում, վոր այդ աղբյուրներից շատերը հարատե բնույթ չունեն: Գար-

նանային հորդառատ աղբյուրներից շատերը մինչեւ աշուն նվազում և կամ բոլորովին չորանում են: Նույնիսկ շատերն իրանց բղասած տեղից հոսելով, կարծ ճանապարհի վրա անհետ կորչում են Արագածի ճեղքաղված քարերի մեջ: Բացի դրանից, յերեմն գոյություն ունեղող մշամառու աղբյուրները ժամանակի ընթացքում բոլորովին կտրվում են: Այս վերջին յերեսույթը պատճառ ե յեղել շատ գյուղերի ավերվելուն: Բնակչությունը զրկվելով իր աղբյուրից, սախաված ե յեղել թողնել իր հին բնակավայրը և հեռանալ ուրիշ տեղ: Արագածի աղբյուրների այդ հատկությունների շնորհիվ, Արագածի շուրջը հանդիպում են բազմաթիվ լքյալ գյուղերի ավերակներ: Այդ յերեվույթն ավելի նկատելի յե Արագածի արևմտյան և հարավային լանջերի ու փեշերի վրա: Շատ գյուղեր ոգտագործելիս են յեղել հետավոր աղբյուրներ, ջրամբարներ և ջրանցքներ: Բայց հաճախակի արշավանքների և ավերումների շնորհիվ այդ ջրամբարները կամ ջրանցքներն այժմ ավերված և վոչնչացված են: Նրանց գոյության մասին կարելի յե իմանալ միայն տեղական հիմնավոր շինությունների արձանագրությունից: Ալիշանն իր «Այրարատ» գրվածքում ընդորինակում ե հին վանքերից և յեկեղեցու ավերակներից արձանագրություններ, վորոնցից մի քանիսը մատնացույց են տնում զանազան տեղերից ջրեր բերելու մասին: Որինակ, հին թալին գյուղի ավերակների վրա հիշված ե, վոր վանականները 783 թ. Թալին գյուղի համար ջուր են բերել Սարկա-

պունու դաշտից: (Տես «Այրարատ», եջ 138): Նույն «Այրարատում» (եջ 144), Արուճ (Թալիշ) գյուղի արձանագրության մեջ հիշված ե, վոր այդ յերկու գյուղերի միջի ջուրը բաժանված ե յեղել յերկու հավասար մասերի և այլն: Հետազոտությունների ժամանակ այս հնագույն արձանագրությունները կարող են ցուցմունքներ տալ լրյալ գյուղերի վորտեղից ջուր ստանալու մասին: Այս հետազոտությունները գործնական մեծ նշանակություն ունեն Արագածի շրջապատի գյուղացիությանը ջրով ապահովելու հարցում: Ուշադրության արժանի յեն նաև ստորերկրյա ջրերի ձայներ լսվող «Գոգո» կոչված տեղերը մանրամասն հետազոտելու տեսակետից: Ճիշտ ե, թեև այդ ստորերկրյա ձայները մեծ մասամբ վոչ այլ ինչ են, յեթե վոչ քամիներից առաջ յեկած ձայներ, բայց, ինչպես յենթագրում են Գիտությունների Ակադեմիայի՝ վերջին տարիներումս Արագածի շրջակայքում այդ յերևույթներն ուսումնասիրող աշխատակիցները, այդ ստորերկրյա ջրերի ձայները մի քանի տեղերում կարող են ջրերի ներկայության նշաններ լինել: Այդ յերևույթը ցույց է տալիս, վոր մի քանի տեղերում լուրջ ուսումնասիրություններից հետո կարող են նոր աղբյուրներ բացվել տեղական կարիքների համար:

Առանձին ուշադրության արժանի յեն Արագածի բազմաթիվ լճերը՝ նրանց ոգտագործման տեսակետից: Այդ լճերի ջրերը հստակ, մաքուր և առողջարար լինելով, կարող են ոգտագործվել

շրջակա գյուղացիության կողմից իբրև խմելու ջուր կամ հողերի վոռոգման համար: Պարսկական տիբապետության ժամանակ, Սարդար-Հյուսեյին խանի որով, Արագածի Կարա-Դյուլ լճի ջուրը, առանձին առվի միջոցով, Անդեօդի ձորն եր բերված, Արագածի փեշերի այդ շրջանսւմ գտնված հողերը վոռոգելու համար: Ներկայումս այդ առուն բոլորովին խանգարված ե: Արագածի արևմտյան գագաթի շրջակայքում գտնված լճերից առանձին առուներով ջուր եր բերվում նաև հավիճի վանքային հողերը ջրելու համար: Այդ առուների հետքերը մինչև այժմ պարզ յերևում են Արագածի հյուսիսային լանջերում: Նման յերևույթներ նոկատվում են նաև Արագածի այլ շրջաններում:

Այս բոլոր յերևույթները եքսկուրսանտների առանձին ուշադրության արժանի հարցեր են, վոր իրանց լուծումն են պահանջում: Առհասարակ պետք ե ցուցակագրել պատահած բոլոր աղբյուրները և, յեթե կարելի յե, չափել նրանց տված ջրի քանակը: Պետք ե իմանալ, որինակ, թե մի վարկանում կամ ըովեյում աղբյուրը քանի գույլ ջուր ե տալիս: Դրա համար հարկավոր ե միայն ունենալ մի գույլ, և ժամանակույց՝ վազող ջրի քանակը չափելու համար: Լճերի, աղբյուրների ջրերի մանրամասն ուսումնասիրությունները կարող են նոր հնարավորություններ ստեղծել Արագածի շրջապատում բնակվող գյուղացիության համար, նաև կարող են պատճառ լինել նոր բնակավայրեր ստեղծելու կամ հինգյալ գյուղերը վերանորոգելու գործում:

Արագածի շրջապատի ողերևույթաբանական, կլիմայական և դրանց հետ կապված ջրային հարցերն ուսումնասիրելու համար, Գիտությունների Ակադեմիան 1930 թվին Արագածի վրա հիմնել ե «Արագածի բարձր լեռնային մշտական կայան», վորն իր տեսակով Յերոպայում յերկրորդն ե, իսկ Խորհրդային Միության մեջ միակը։ Այդ ողերևույթաբանական կայանը շինված է Կարագյոլ լճի մոտ, 3250 մետր բարձրության վրա։ Այստեղ ամբողջ տարին, ձմեռ թե գարուն, մըշտապես, հատուկ աշխատակիցների միջոցով չափվում և հաշվի յեն առնվազում բոլոր յերևույթները, ինչպես, որինակ՝ ոդի ճնշման աստիճանը, տաքությունը, խոնավությունը, ամպամածությունը, քամիների, ուղղությունը և մթնոլորտային տեղումների քանակը։ Այս ուսումնասիրությունները գործնական մեծ նշանակություն ունեն վոչ թե միայն Արագածի շրջապատի հարցերի, այլ և Խորհրդային Հայաստանի ու Անդրկովկասի մթնոլորտային յերևույթներին վերաբերող խնդիրները լուծելու համար։

Բավկականանալով այս կարճ տեսությամբ, կարեղ ենք համարում մատնացույց անելու Արագած լեռան հետեւյալ առանձնահատուկ յերեվույթները՝ իբրև հետազոտության նյութեր։ Արագածն իբրև մեծ բարձրություն ունեցող լեռ (ամբողջ Անդրկովկասում և իր շրջակայքում), նրա գագաթը կամ նրա լանջերը բարձրանալիս, արժանի յեն հետազոտելու ուշադրության և, յեթե հնար ե, լուսանկարելու։

1. Նրա գլխավոր չորս գագաթներն առանձինառանձին և միասին։
2. Արագածի խառնարանը։
3. «Բառապահնկոմները» առանձին - առանձին։
4. «Կալդերները»։
5. «Սառցարանների ցերկերը» (կրկեսանման փոսերը)։
6. Հին սառցարանների մնացորդները և հետքերը։
7. Լճերը։
8. Գագաթի մոտ և լանջերում գտնված, այսպես կոչված, «Քարածովերը»—մանր քարակույտերը և վիմակույտերը։
9. Հրաբխային կենտրոնների աչքի ընկնող տեսարանները։
10. Արոտատեղիները։
11. Առհասարակ աղբյուրների ակոնքները։
12. Սահանքավոր գետակների հուները։
13. Զրվեժահոս գետակների հետաքրքիր մասերը։
14. Արագածի վրայից յերևացող հեռանկար տեսարանները։
15. Բնորոշ «պարագիտ» հրաբխային յերկոռորդական կենտրոնները։
16. Արագածի շրջակայքում գտնված հին կառուցվածքները (շինարարական նյութերի տեսակետից) և այդ շինանյութերի քարահանքերը։
17. Հին և նոր շինանյութերի տեղերը։
18. Քարայրները։
19. «Կիզել» կոչված բլրակները։

20. Բնորոշ գեոլոգիական կտրվածքները:
21. Հին ջրանցքների տեղերը և հետքերը:
22. Պեմզաների, տուֆերի, հրաբխային մանրունքների և առնասարակ վոչ-մետաղային հարստությունների հանքատեղերը:

ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Մ. Վագներ—Ճանապարհորդություն ի Հայաստան. Թարգմ. Փիլ. Ճամելյան, 1851 թ. Վիննա:
2. Ի. Աբիք—Геология армянского нагорья I и II. Тифлис, 1899.
3. Ա. Ալիքանի—Այրարատ 1890 թ. Վենետիկ:
4. Մ. Սագաթելյան—Экономический очерк Эриевской губернии. Тифлис, 1879 г.
5. Ի. Շուրовский—Геологический очерк Кавказа 1862 г.
6. Ա. Պատուխօվ—Восхождение на Алагез 1893 г. Изв. Кавказского географ. о-ва 1896 г. XI вып. II. стр. 85—96.
7. Խ. Լինչ—Армения, паревод Е. Джунковского, 1910 г. Тифлис.
8. Ա. Կալանтар—Алагезские казенные летние пастбища 1895 г. Тифлис.
9. Ս. Захаров—К характеристике высокогорных почв Кавказа 1914 г. Москва.
10. Օ. Կարապետյան—Геологический очерк Армении 1927 г. Эривань.
11. Դ. Չիմլիև—Артикские строительные туфы. Москва, 1930 г.
12. Ա. Իվանчин-Писарев—Месторождение Артикской туфовой лавы, Москва, 1930 г.
13. Ակադемия Наук—Ալագեզ, տ. I, 1931 թ. Ленинград.
14. Տո-же տ. II. 1932 թ.

«Ազգային գրադարան



NL0283555

ԳԻՒԾ 40 ԿՈՂԵԿ

8931

Инженер-геолог О. Карапетян

ГОРА АРАГАЦ



АРМЕНГИЗ — ЭРИВАНЬ

796
4-29